

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ  
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (սեղմագիր`ՋԼՄ-ների համար)**

ՀՀ տարբեր տարածքներում նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով իրականացվել են նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային մոդելներ, որի արդյունքում ՀՀ մարզերի 69 համայնքներում իրականացվել են նախադպրոցական ծառայությունների կազմակերպման ծրագրեր, մասնավորապես` ՀՀ Կոտայքի մարզ` 13, ՀՀ Լոռու մարզ` 15, ՀՀ Տավուշի մարզ` 10 և ՀՀ Շիրակի մարզ 31: Նշված համայնքների հաստատություններում ընդգրկված են շուրջ 1600 երեխա: 2012 թվականին հանրակրթության ոլորտում իրականացված բարեփոխումներն ուղղված են եղել կրթության դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության` այդ թվում էլեկտրոնային ուսումնական նյութերի, բովանդակային որակի ապահովման և ներդրման աշխատանքներին, ինչպես նաև հանրակրթության ոլորտի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ու կարողությունների հզորացմանը:

ՀՀ մարզերի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման արդյունքում 6742 ուսուցչի համար կայացվել է «Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» որոշումը: Տարակարգեր են շնորհվել հանրապետության 44 ուսուցիչների: Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հավաստագրման գործընթացին մասնակցել են 339-ը, որից հավաստագրվել են 249-ը:

Ավարտվել են Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցին նոր դպրոցների միացման աշխատանքները` 1401 ուսումնական հաստատություններ ընդգրկված են մեկ միասնական ցանցում: Ստեղծվել են 840 էլեկտրոնային կրթական պաշարներ: Մշակվել են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների 17 պետական կրթական չափորոշիչներ, համապատասխան ուսումնական պլաններ և մոդուլային ծրագրեր: Վերապատրաստվել են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի 920 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ, 40 տնօրեններ և փոխտնօրեններ:

ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրման գործարկումն ապահովելու նպատակով մշակվել և հաստատվել են մի շարք իրավական ակտեր, որոնց համաձայն կրթության որակավորումների ազգային համակարգը պետք է դառնա Հայաստանում կրթության և ուսուցման համընդհանուր համակարգի բաղկացուցիչ մաս: Մշակվել է ուսանողների ֆինանսական վիճակի գնահատման չափանիշները և ուսանողների ֆինանսական աջակցության ծրագիրը: Ամփոփվել են «Լավագույն ուսանող» հանրապետական միջբուհական փուլի մրցույթի արդյունքները, համաձայն որի 33 ուսանող կպարգևատրվեն պատվոգրերով և դրամական մրցանակներով:

Երևանի պետական և Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանների և ՌԴ Ուրալի դաշնային, Գլազգոյի համալսարանների միջև համագործակցության արդյունքում՝ տրամադրվել են կրկնակի դիպլոմների՝ երեք մասնագիտությունների գծով:

ՀՀ կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված ՀՀ կրթության և գիտության նախարարության 8 միջոցառումները կատարվել են սահմանված ժամկետներում: